ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԱՐՏԱՎԱԶԴ V-Ի ԺԱՄԱՆԱԿ (252/3—261)

Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

III—IV դդ. Սասանյան Իրանի պետության՝ Երանշահրի պատմությունը բնորոշվում է այն ծանր ու համառ պայքարով, որ նա մղում էր Հռոմեական կայսրության դեմ իր արևմտյան սահմանագծում գտնվող Միջագետքին տիրելու համար։ Այդ անընդմեջ ռազմական բախումներին անխուսափելիորեն պիտի ներգրավվեր նաև Հայաստանը, և հայ ժողովուրդը ճիգեր էր թափում իր անկախությունը պահպանելու համար։ Երկու մարտնչող աշխարհակալությունների պայքարի արդյունք էր Մեծ Հայքի թագավորության տարածքի բաժանումը նրանց միջև։ Դա հետևանք էր 244 թ. կնքված «ամենաամոթաբեր հաշտության», որը Հռոմի կողմից ճանաչվեց միայն 252/3 թ.[1]։ Ըստ այդ համաձայնագրի, Մեծ Հայքի թագավորության տարածքի 4/5-ը անցավ Իրանին, իբրև նրան ենթակա վասալ թագավորություն, տեղական դինաստիայի՝ Արշակունի գահակալի գլխավորությամբ, իսկ 1/5-ը մնաց նախկին վիճակում, այսինքն՝ իբրև Հռոմեական կայսրության վասալ թագավորություն, որտեղ իշխում էր Տրդատ II Արշակունի թագավորը։

Հայաստանի պարսկական մասը մտավ Երանշահրի կոնֆեդերացիայի մեջ և անցավ քաղաքական գոյության այն փուլերը, որ բնորոշ էին Սասանյան Իրանին ենթակա կախյալ թագավորություններին։ Սակայն Երանշահրի կոնֆեդերացիայի կազմում գտնվող Հայաստանը միայն 9 տարի կառավարվեց տեղական դինաստիայի ներկայացուցչի կողմից, հանձինս Արտավազդ V Արշակունի թագավորի (252/3—261)։ Նա պետք է գահընկեց արված ու սպանված լինի, և Հայաստանի այս մասը դառնում է Սասանյան արքայազունների «դաստակերտ»։

252/3 թ. Շապուհ I-ը (243—272) հարկադրեց Գալլոս կայսրին (251—253) պաշտոնապես ճանաչել 244 թ. «ամենաամոթաբեր հաշտությունը», սակայն հռոմեացիների կողմից լքված Հայաստանը ապստամբած Տրդատ II-ի (216—252/3)[2] գլխավորությամբ դեռ մաքառում էր անկախության համար։ Ստեղծվել էր այնպիսի վիճակ, որ երկիրը գրեթե ամբողջովին գրավել էին պարսիկները, իսկ Տրդատի որդիների և Արշակունի ազգականների մի մասն արդեն անցել էր հաղթողների կողմը և դրանով գեթ ժամանակավորապես փրկել հայ Արշակունիների գահակալական իրավունքները։ Ինչպես հաղորդում է Զոնարան (12, 21), երբ պարսիկները նվաճեցին Հայաստանը, «այս երկրի Տրդատ թագավորը փախավ, իսկ նրա որդիները մեկնեցին պարսից

---

1 *Ս. Տ. Երեմյան, «Ամենաամոթաբեր հաշտությունը»։ Մեծ Հայքի թագավորության բաժանումը 244—252/3 թթ. Սասանյան Իրանի և Հռոմեական կայսրության միջև (տպագրվում է)։*

2 *Այնուհետև Տրդատ II-ը թագավորել է Հայաստանի հռոմեական մասում՝ 252/3—273 թթ.։*

կողմերը»[3], ինչպես ժամանակին Պարթև Արշակունիների արքայատոհմի ներկայացուցիչները «հնազանդեցան և ի ծառայութիւն մտին համբարձելոյ թագաւորութեան Ստահրացւոյն և, ընդ նմին միամտեցան»[4]։ Շատ ավելի ուշ, սակայն, ճանաչեցին կախվածությունը նրանցից նաև հայ Արշակունիները։

Հավանաբար, քաղաքական կողմնորոշման հարցը մեծ տարաձայնություններ էր առաջ բերել հայկական արքունիքում։ Տրդատ II-ի որդիների մի մասը մերժել էր հոր հռոմեասեր քաղաքականությունը և մնացել էր Հայաստանի պարսկական հատվածում, իսկ մյուսները նախարարների զգալի մասի և Տրդատ II-ի հետ անցել էին Մեծ Հայքի հռոմեական մասը։ Նախարարներից մի քանիսն էլ ապավինել էին անմատչելի լեռներին ու ամրություններին։ Ինչպես հպատակ այլ երկրներում, այնպես էլ Հայաստանում, Սասանյանները ժամանակավորապես հանդուրժեցին տեղական թագավորի իշխանությունը, որը, անշուշտ, Արշակունի դինաստիայից էր և տարագիր Տրդատ II-ի ազգականներից՝ Արշակունի սեպուհներից մեկը։ Այդ Արտավազդն էր, որ Շապուհ I-ի կողմից բարձրացվեց հայկական գահը, իրավական այն հիմքերի վրա, որ գոյություն ուներ պարթևների և հայերի միջև 63 թ. Հռանդեայի պայմանագրի համաձայն, ըստ որի՝ հայկական գահը համարվում է պարթև Արշակունիների «երկրորդական դահը»։ Այժմ, չնայած դինաստիան փոխվել էր, սակայն մնում էր Իրանի պետությունը և «որ Հայոց թագաւոր էր՝ նա էր երկրորդ Պարսից տէրութեանն»[5]։

Արտավազդ V-ը Մեծ Հայքի պարսկական մասում, Վաղարշապատ մայրաքաղաքում թագավորել է շուրջ 9 տարի՝ 252/3—261 թթ.։ Գերիշխող է այն կարծիքը, որ այս Արտավազդ V-ը Արշակունյաց դինաստիայից չի եղել և թերևս նա նույն Արտավազդ Մանդակունին է, որ ճիշտ չպետք է լինի[6]։ Անշուշտ, ավելի հիմնավորված է Ա. Աննինսկու ենթադրությունը, որ Արտավազդ V-ը Տրդատ II-ի որդին է[7]։ Նա կարող է նրա որդին չլինել, բայց իր Արշակունի ազգականներից է։ Ակադ. Հ. Մանանդյանը հիմնավորված և հաստատուն չհամարելով գիտնականների կռահումներից և ոչ մեկը, գրում է. «Կարելի է միայն հավանական համարել, որ այս Արտավազդ թագավորը, որը Սասանյան Պարսկաստանի կողմնակից էր և բարեկամ, հայ Արշակունիների տոհմիցը չէր»[8]։ Երբ կշռադատում ենք այն ժամանակի պատմական իրադրությունը, տեսնում ենք, որ այս կարծիքը չի կարող ճիշտ լինել։

---

3 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 84—85։ Ինչպես ճիշտ նշում է Մ. Աբեղյանը, «Հռոմեական կողմը փախչողը Տրդատ Բ-ն է մեծ հասակում. վեպի մեջ նա փախչելիս հիշվում է իբրև մանկիկ ըստ վիպական ոգու» (Մանուկ Աբեղյան, Երկեր, հ. III, Երևան, 1968, էջ 188)։

4 «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1909, էջ 17։

5 Նույն տեղում, էջ 15։

6 Մենք ևս բաժանում էինք այդ կարծիքը, սակայն նոր նյութերի հետազոտությունը բերեց հակառակ եզրակացության (տե՛ս Ս. Տ. Երեմյան, Նախշ-ի Ռուստեմի «Քաաբա-ի Զարդուշտ» հուշարձանի արձանագրության վկայությունները Հայաստանի մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 2, էջ 62—63)։

7 А. Аннинский, Древние армянские историки как исторические источники. Одесса, 1899, стр. 44.

8 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 93։

Եթե աչքի առաջ ունենանք Սասանյանների ընդհանուր քաղաքականությունը Երանշահրի կազմում մտնող ոչ-իրանական («Ան-Երան»)[9] երկրների թագավորությունների նկատմամբ, կտեսնենք, որ նրանք հանդուրժում էին Սասանյանների ծառայության մեջ մտած տեղական պարթևական ավագանու ներկայացուցիչներին, նույնիսկ պարթև Արշակունիների շառավիղներին։ Սակայն դա ժամանակավոր երևույթ էր, և հարմար առիթի դեպքում տեղական դինաստիայի թագավորությունը վերացվում էր ու տվյալ երկրի գահը դառնում էր Սասանյան դինաստիայի ներկայացուցիչների ժառանգական սեփականություն՝ «դաստակերտ». այդպես էին՝ Մեշան (Մեսենե), Գելան, Կրման և «Հինդ, Սադաստանի, Տուրեստանի, մինչև ծովափ» միացյալ երկրների գահը, ապա Հայաստանը, ավելի ուշ՝ Քուշանաց աշխարհը (Քուշանշահը)։ Նշված երկրներից Սասանյանների համար ամենակարևորը հռոմեական կայսրությանը սահմանակից Հայաստանն էր։ Հայաստանին տիրելու համար Հռոմի և Պարթևստանի միջև մղվող պայքարը պարթև Արշակունիների վերացումից և Սասանյանների տիրակալության հաստատումից հետո ավելի է սրվում։ Տիգրանի արքունիքի հիմնական ձգտումն էր Հայաստանում հաստատել Սասանյան դինաստիայի ժառանգական իշխանությունը, այնպես, ինչպես առաջ Մեծ Հայքը Արշակունիների երկրորդ թագավորությունն էր հանդիսանում և հայկական գահը՝ «երկրորդական գահ»։ Այժմ նույն ստատուսը պիտի ստանար Հայաստանը, իբրև Սասանյանների երկրորդ թագավորություն, իսկ հայկական գահը՝ Սասանյանների «երկրորդական գահ»։ Ինչպես կտեսնենք, դա նրանց հաջողվում է ժամանակավորապես իրագործել։

Սասանյանների այս քաղաքականության պայմաններում, ժամանակավորապես (ընդամենը 9 տարի) հանդուրժվում է հայ Արշակունի՝ սեպուհ Արտավազդի թագավորությունը։ Դա Սասանյանների համար միջոց էր երկիրն իրենց կողմը գրավելու, և պատեհ առիթը ներկայանալուն պես Արտավազդը պիտի գահընկեց արվեր և հայկական գահը պետք է դառնար Սասանյան գահաժառանգների սեփականություն։

Մեզ հետաքրքրող Արտավազդ V թագավորի մասին կցկտուր տեղեկություններ են պահպանվել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ, ուր որոշ պատճառներով այս Արտավազդը շփոթվել է Արտաշեսի որդի Արտավազդի հետ։ Խորենացու տեղեկությունների մեջ պահպանվել են աղոտ փաստեր Տրդատ II-ի արքունիքում առաջացած տարաձայնությունների մասին, որոնք կապվում են Արտավազդ V-ի գահակալության հետ։ Մեզ հասած կցկտուր տեղեկությունների համաձայն, Տրդատ II-ի թագավորության ժամանակ գահաժառանգ էր նրա որդին՝ Խոսրովը, միայն որը իրավունք ուներ բնակվելու Այրարատում՝ հայոց ոստանում (հայկական արքունիքում), որն այդ ժամանակ գտնվում էր Վաղարշապատում։ Արշակունյաց տոհմի մյուս ներկայացուցիչները՝ ավագ սեպուհները, բնակվում էին նրանց հատկացված Հաշտյանք, Աղիովիտ և Առբերանի գավառներում։ Արտավազդը գահաժառանգ չէր ու թագավորել է իբրև Սասանյանների քաղաքականության կողմնակից

---

9 Շապուհ I-ի արձանագրություններում Հայաստանը հիշատակվում է «Ան-Երան» երկրների շարքում։ Տե՛ս В. Г. Луконин, Завоевания сасанидов на востоке и проблема кушанской абсолютной хронологии («Вестник древней истории», 1969, № 2, стр. 32, прим. 721), տե՛ս նաև Ричард Фрай, Наследие Ирана, М., 1972, стр. 295.

և, անշուշտ, որպես հակառակորդ Հայաստանի հռոմեական մաս անցած իր հոր կամ եղբոր՝ Տրդատ II-ի ու նրա որդի՝ գահաժառանգ Խոսրովի։

Մովսես Խորենացին, այս ժամանակ տեղի ունեցած դեպքերը խառնելով Տրդատ I-ի (63—88) ժամանակի դեպքերի հետ, հաղորդում է, որ Տիրան (իմա՝ Տրդատ II) թագավորը, որը «մտերմութեամբ ծառայեաց հռոմայեցւոց»[10], հարկադրված էր դգաղվել Հաշտյանք, Աղիովիտ և Առբերանի գավառներում բնակվող Արշակունի սեպուհների հարցով։ Ըստ Խորենացու տեղեկության, Տիրան-Տրդատի մոտ են գալիս Արշակունյաց ցեղից իր հին ազգականները, որոնք ապրում էին Հաշտյանքի կողմերում և ասում. «Ընդարձակեա՛ մեզ զժառանգութիւնս, զի նեղ է. քանզի բազմացաք յոյժ»։ Եւ նա հրամայէ ոմանց ի նոցանէ երթալ ի գաւառն Աղիովտի և Առբերանւոյ։ Իսկ սոցա առաւել ևս բողոք կալեալ առ արքայի, թէ առաւելագոյն նեղ է մեզ՝ ոչ ինչ ունկնդիր լինի Տիրան. այլ հաստատեալ վճիռ՝ ոչ այլ ժառանգութիւն տալ նոցա, բայց զոր ունէինն՝ հաւասար տրոհել յինքեանս»[11]։ Այնուհետև պատմահայրը ավելացնում է, որ հողը «բաժանեալ ըստ մարդաթուի՝ գտաւ պակաս ժառանգութիւն բնակողացն Հաշտենից. վասն որոյ բազումք ի նոցանէ եկին ի գաւառն Աղիովտի և Առբերանւոյ»[12]։ Այս ընդարձակ հատվածի մեջ նշված է Արշակունի սեպուհների դալը Հաշտյանք գավառից Աղիովիտ և Առբերանի գավառները։ Հայաստանում III դ. կեսերին ստեղծված իրադրությունը նկատի ունենալու դեպքում կտեսնենք, որ այս տեղեկության մեջ ճիշտ չեն բացատրված Արշակունի սեպուհների գալու հիմնական շարժառիթները։ Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ 244—252/3 թթ. բաժանումով Հաշտյանք գավառը մնում էր Հայաստանի հռոմեական մասում, իսկ Վանա լճի հյուսիսային և հյուսիս-արևելյան եզերքում գտնվող Աղիովիտ և Առբերանի գավառներն ընկնում էին պարսկական Հայաստանի կենտրոնական մասում, ապա պարզ կլինի, որ Խորենացու վկայության մեջ արտացոլվել է այն իրողությունը, որ Տիրան-Տրդատ II-ի քաղաքականությունից դժգոհ Արշակունի սեպուհները նրան անցած երկրամասից փախչում են պարսկական մասը և ենթարկվում Սասանյանների գերիշխանությանը։ Ահա այս Արշակունի սեպուհներից պետք է լինի Մեծ Հայքի պարսկական մասի գահակալ, «մեծ թագաւորն Հայոց» կամ «մեծ արքայ Հայոց» Արտավազդ V-ը։

Արտավազդ V-ի թագավորությունը, ինչպես արդեն ասվեց, Սասանյաններն առժամանակ հանդուրժում էին։ Հայոց թագավորը, իբրև վասալ իր այրուձիով պարսկական զորամասերի հետ մասնակցում էր Հռոմեական կայսրության դեմ մղվող պատերազմներին, սակայն սա ժամանակավոր երևույթ էր, քանի որ վաղ թե ուշ Սասանյան Իրանն իրեն անցած Մեծ Հայքի մեծագույն մասը պիտի դարձներ Երանշահրի արքայից արքայի գահաժառանգի (որ միևնույն ժամանակ գերագույն զորահրամանատար էր) «դաստակերտը»։

Կարևոր է նշել, որ Խորենացին Արտավազդ թագավորի անունը կապում է Անձևացիք գավառի և Անձևացյաց նախարարական տոհմի հետ, որի ներկայացուցիչը՝ Երախնավու Անձևացին, ըստ Խորենացու վկայության, եղել է արևելյան զորքի հրամանատար, բայց իրականում նա պետք է լիներ Արտա-

10 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 193։
11 Նույն տեղում։
12 Նույն տեղում։

վազդ V-ի զորքերի սպարապետը։ Սակայն Խորենացին շփոթելով դեմքերն ու դեպքերը, ասում է, որ Տիրան-Տրդատը, սիրելով այս Երախնավուին «տայ նմա զդահն երկրորդական, զոր ունէր Արտաւազդ»[13]։ Այս տեղեկության մեջ կարևոր է այն, որ Արտավազդ թագավորը գրավել է երկրորդական գահը։

Խորենացու մոտ այս Արտավազդի մասին պահպանված հիշողությունների մեջ կարևոր է նաև այն, որ նրա գահակալության ժամանակ Հայաստանում գտնվել է պարսկական իշխանության ներկայացուցիչը։ Ըստ Խորենացու, Հայոց թագավորը Երախնավու Անձևացու մոտ է թողնում «...զԴրուասպ ոմն պարսիկ զմտերիմ իւր, որ խնամեցեալ էր ընդ նախարարս Վասպուրականի...»[14]։ Այս ժամանակաշրջանում «Վասպուրական» նշանակում էր արքայազունների երկիր, որպիսին հանդիսանում էին Արշակունի սեպուհների երկիր Աղիովիտ և Առբերանի գավառները։ Հիշյալ Դրվասպ պարսիկը պետք է լիներ Ծաղկոտն գավառի Շահապիվան ավանում կենտրոնացած պարսկական զորամասերի հրամանատար և «շահապ»[15]։ Ծաղկոտն գավառը Այրարատում տեղավորված «կայենական զօրքի» ամառանոցն էր և այնտեղ՝ Անգղ ավանում այս ժամանակ արդեն պիտի լիներ ատրուշան և մոգերի համայնք։ Կարևոր է նաև Խորենացու այն տեղեկությունը, որ թագավորը նրան էր տվել «զաւանն Տատեօնս հանդերձ ագարակօքն, և զայգին մեծ, յոր մտանէր Առուն գետ[16], հանեալ ի ծովէն Գայլատուայ»[17]։

Ուշագրավ է Խորենացու նաև այն հաղորդումը, որ «քանզի զաւակ ոչ գոյր Արտաւազդայ՝ արքայ թողու յԵրախնաւու զամենայն տունն Արտաւազդայ»[18]։

Պատմահոր այս տեղեկությունը կապ պիտի ունենա շղթայակապ Արտավազդի ավանդության հետ, որի մասին նա հաղորդում է «Պատմության» նախորդ գլխում և որի հետ նույնացնում է այս Արտավազդ թագավորին։ Խորենացին գրում է, որ պառավները Արտավազդ թագավորի մասին զրուցում են, թե «արդելեալ կայ յայրի միում, կապեալ երկաթի շղթայիւք. և երկու շունք հանապազ կրծելով զշղթայսն՝ ջանայ ելանել և առնել վախճան աշխարհի. այլ ի ձայնէ կռանահարութեան դարբնաց զօրանան, ասեն, կապանքն։ Վասն որոյ և առ մերով իսկ ժամանակաւ բազումք ի դարբնաց, զհետ երթալով առասպելին՝ յաւուր միաշաբաթուջ երիցս կամ չորիցս բախեն զսալն, զի զօրասցին, ասեն, շղթայքն Արտաւազդայ»[19]։

Ինչպես տեսնում ենք, տվյալ դեպքում ևս միատեսակ անուններ կրող անձնավորությունները դարձել են մեկ անձնավորություն։ Այսպես է Արտաշեսի որդի Արտավազդը և մեզ հետաքրքրող Արտավազդը, թերևս Խոսրով I-ի որդին։ Արտավազդ V-ի մահվանից հետո նրա տոհմի գահակալությունը չի շարունակվել և իշխանությունն անցել է Սասանյան Որմիզդ-Արտաշիրին,

13 Նույն տեղում, էջ 194։

14 Նույն տեղում։

15 Ագաթանգեղոս, էջ 460. «զշահապն Շահապիւանի»—873։

16 Գայլատու լճից բխող գետը, որը շարունակվում է Մակվի մոտերքով Զանգիսար անվան տակ, թափվում է Արաքս գետը։ Հնում այն կոչվել է «Առուն գետ», որ «գետառուս» բառի այլ ձևն է և ցույց է տալիս, որ մի ժամանակ, գոնե նրա վերին հոսանքում, այն իսկապես առու է եղել։

17 Մ. Խորենացի, էջ 194։

18 Նույն տեղում։

19 Նույն տեղում, էջ 192։

ուստի Խորենացին կարող էր ասել, որ «զաւակ ոչ գոյր Արտաւազդայ...»[20], բայց ասել, որ թագավորը դրա պատճառով Արտավազդի ամբողջ տոհմը թողեց Երախնավու Անձևացում, իրական չէ։ Տվյալ դեպքում միայն մի հիմք կա՝ Դա շղթայակապ Արտավազդի առասպելն է, որ կապվում է Անձևացիք գավառի Ագռավաքար կամ Դարբնաց քար կոչվող Անահիտի մեհյանի հետ, որի տեղում միջին դարերում հիմնվեց Հոգվոց վանքը[21]։ Այս վայրը կապվում է Միհրի պաշտամունքի հետ և մինչև վերջերս ժողովուրդը դիտեր, որ այնտեղ քարայրում փակված է Մհերը, որի սրբազան թռչունն էր ագռավը[22]։ «Դարբնացքար» տեղանունն ինքնին վկայում է այս առասպելի մասին և պատահական չէ, որ մինչև վերջերս Հոգվոց վանքում էին ցույց տալիս Տրդատ թագավորի գերեզմանը[23]։ Տվյալ դեպքում պարզապես շփոթություն է առաջացել, որովհետև այս վայրը կարող է կապվել միայն շղթայակապ Արտավազդի կրույցի հետ։ Տիրան-Տրդատ II-ը պիտի թաղվեր հայ Արշակունիների դամբարանում, որը գտնվում էր Դարանաղի գավառի «յամուր տեղին անուանեալ Անի, ի թաղուորաբնակ կայեանսն հանգստոցաց գերեզմանաց թագաւորացն Հայոց»[24], իսկ Արտավազդ V-ը հասկանալի պատճառով չէր կարող այնտեղ թաղվել։ Նա պիտի թաղվեր Անձևացիք գավառում՝ Ագռավաքար վայրում, և պատահական չպետք է համարել, որ շղթայակապ Արտավազդի զրույցը կապվում է այս տեղի հետ։

Մեծ Հայքի հռոմեական մասում ևս գոյություն ուներ որոշակի ստատուս։ Հռոմեական Հայաստանը (կենտրոնը՝ Ջրմես ավան) կախյալ թագավորություն էր, որի թագավորը իր այրուձիով շարունակում էր մասնակցել կայսրության պատերազմներին, իբրև «դաշնակից և բարեկամ կայսեր և հռոմեական ժողովրդի»։ Հռոմեական կայսրությանն անցած Մեծ Հայքի արևմտյան մասը բաղկացած էր Ծոփաց աշխարհից և Բարձր Հայք նահանգից, որը կոչվում էր Armenia maior, այսինքն՝ «Մեծ Հայք» և միացած էր Փոքր Հայք— Armenia minor երկրի հետ։ Իբրև «ձեռական աշխարհ թագաւորին Հայոց» Հռոմեական Հայաստանի կազմի մեջ պիտի մտներ նաև Միջագետքի Գիմաթենե գավառը Վաղարշակուպոլիս կենտրոնով[25]։ Քանի որ հռոմեական Հայաստանը մտնում էր կայսրության վարչական բաժանման համակարգի մեջ, ուստի Ագաթանգեղոսն այն համարում է «դաստակերտ կայսերաց»[26]։

---

20 Նույն տեղում, էջ 194։

21 Խորենացուն վերագրվող «Թուղթ [առ] Սահակ Արծրունի ե «Պատմութիւն սրբոյ Հռիփսիմեանց» (տե՛ս «Մովսէսի Խորենացւոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1865, էջ 234—296, 301)։

22 Բ ա գ. Ա վ դ ա լ բ ե գ յ ա ն, Միհրը Հայոց մեջ (տե՛ս նրա «Հայագիտական հետազոտությունները», Երևան, 1969, էջ 40—41, 48, 54, տե՛ս նաև Г. Халатьянц, Армянский эпос в истории Армении Моисея Хоренского, М., 1896, стр. 314—324).

23 Գ ա ր ե գ ի ն Ս ր վ ա ն ձ տ յ ա ն, Հնոց և նորոց, էջ 13։

24 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, էջ 409։

25 Վաղարշակուպոլիսը (Οὐαλαρσακούπολις) կոչվում էր նաև Արանե և հայտնի էր իր ջերմուկներով, ուստի հայերը միջին դարերում այն կոչում էին Ջերմուկ, որի թուրքական արտասանությունն է նրա այժմյան Ջերմիկ անունը։ Այն գտնվում է Ամիդ-Դիարբեքիրից արևմուտք (տե՛ս Jos. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 251, 553, տե՛ս նաև Ս. Տ. Ե ր ե մ յ ա ն, Պայմանական հողատիրության առաջացման հարցի շուրջը ֆեոդալականացող Հայաստանում։ «Ձեռական իշխանութիւնը» Հին Հայաստանում («Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 1, էջ 3—8)։

26 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, էջ 73։

Հռոմեական Հայաստանի վարչական բաժանումն այդ ժամանակաշրջանում արտացոլվել է Վերոնյան երկրացուցակի մեջ (Codex veronensis, II, 8)։ Ըստ այդ ցուցակի, իբրև Հռոմեական կայսրության Պոնտական շրջանի երկրամաս հիշատակված է Փոքր Հայքը, որին ավելացվում է նաև Մեծ Հայքը. «Փոքր Հայք, այժմ նաև Մեծ Հայքը» (Armenia minor, nunc et maior addita)։ Սրկրի վարչական այս բաժանման սկիզբը առաջ է եկել ոչ թե 298 թ., Մծբինի 40-ասյա դաշնադրի հետևանքով, ինչպես սովորաբար կարծում են, այլ այն հետևանք էր 244 թ. «ամենաամոթաբեր հաշտության», որը փաստորեն ուժի մեջ մտավ միայն 252/3 թ.։

Ենթադրվում է, որ Վերոնյան երկրացուցակը Դիոկղետիանոս կայսեր (284—305) պրովինցիալ բաժանման ռեֆորմ է։ Այդ պետք է ճիշտ լինի, սակայն նշված երկրացուցակն արտացոլում է մինչև 298 թ. գոյություն ունեցող իրավիճակը։ Ըստ Վերոնյան երկրացուցակի, ամբողջ կայսրությունը բաժանված էր 12 դիոցեզների, որոնցից երկուսը՝ Oriens և Pontica-ն, ընկնում էին Փոքր Ասիայի հյուսիսային և հարավ-արևելյան մասում։ Pontica—Պոնտական դիոցեզը բաժանված էր 7 պրովինցիայի, որոնց թվում էր նաև «Փոքր Հայքը, այժմ նաև Մեծ Հայքը ավելացած»[27]։ Հետագայում (448 թ. կամ, ըստ Մոմզենի, ոչ ուշ քան 386 թ.) Պոլեմիոս Սիլվիոսն իր երկրացանկի (Laterculus) մեջ կրկնում է Վերոնյան երկրացուցակը, հաշվի առնելով նաև այն փոփոխությունները, որ տեղի էին ունեցել 386 թ. մոտերքը[28], Մեծ Հայքի թագավորության երկրորդ բաժանման հետևանքով (384—387 թթ.)։ Ամբողջ թյուրիմացությունն առաջացել է նրանից, որ ուսումնասիրողները Armenia maior-ի տակ հասկացել են Մեծ Հայքի միասնական ամբողջ թագավորությունը, նրա ամբողջական տարածքը, մոռանալով որ Armenia maior նեղ իմաստով պիտի հասկացվեր «Աշխարհացույցի» Բարձր Հայք նահանգի տարածքը։ Միայն այս փոքրիկ տարածքը Ծոփաց աշխարհի հետ կարող էր միացվել Փոքր Հայքին՝ իբրև հավելում։ Այդպես է եղել իրականում և՛ 244—252/3 թթ. և՛ 384—387 թթ. բաժանման ժամանակ, ուստի Հ. Մանանդյանը[29] ճիշտ չէ, երբ Վերոնյան երկրացուցակում նշված Armenia maior-ը համարում է 298 թ. վերականգնված Մեծ Հայքի ամբողջական տարածքը։ Սակայն ճիշտ է Ն. Ադոնցը, երբ գրում է, որ Վերոնյան երկրացուցակի Armenia minor-ից հետո nunc et maior addita հավելումը ընդունվել է Սիլվիոսի կողմից, որովհետև այն համապատասխանում էր IV դ. վերջերին հաստատված այն նոր իրավիճակին, ըստ որի Հայաստանը բաժանվել է երկու մասի[30]։ Հիրավի, ինչպես տեսանք, Դիոկղետիանոսի կայսրության ժամանակաշրջանում՝ 284—297 թթ. և նրանից առաջ՝ սկսած 252/3 թթ., Հայաստանի տարածքային բաժանումը նույնն էր, ինչ որ 384—387 թթ. հաջորդած ժամանակաշրջանում։ Ռազմական տեսակետից 252/3—297 թթ. Հռոմեական Հայաստանը շարունակում էր մնալ Կապադովկիայի ռազմական շրջանի համակարգում։

Արտավազդ V-ի թագավորությունը Հայաստանի պարսկական մասում հավիվ 9 տարի տևեց։ Հայ Արշակունիներին վերացնելու առիթ հանդիսացավ Արտավազդ V-ի դիրքորոշումը գերեվարված Վալերիանոս կայսեր հանդեպ։

27 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, стр. 85.

28 Նույն տեղում, էջ 86։

29 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 116։

30 Н. Адонц, նշվ. աշխ., էջ 88։

Վալերիանոսի գերությունը 260 թ. և նրա բանակի ոչնչացումը Հին Աշխարհի համար արտասովոր երևույթ էր. այդպիսի խայտառակ և ստորացուցիչ պարտություն կայսրությունը չգիտեր։ 361 թ. Շապուհ I-ի դեսպաններն իրենց և հարևան երկրների թագավորներին հանձնում էին նամակներ, որոնց միջոցով աշխարհով մեկ ազդարարում էին, որ Խառանի և Եդեսիայի ճակատամարտերում ջախջախվեց հռոմեական 70 հազարանոց բանակը, իսկ կայսր Վալերիանոսը, նրա եպարքոսներն ու արքոնտները գերի վերցվեցին. Սիրիան, Կիլիկիան և Կապադովկիան ենթարկվեցին հրկիզման, ավերման ու նվաճման։

Այս հաղթական ուղերձին առանձին թագավորությունների տիրակալները տարբեր կերպ արձագանքեցին։ Նրանց մի մասը պատասխանեց, իսկ մյուս մասը արհամարհող լռությամբ դիմավորեց։ Բարեբախտաբար մեզ է հասել Հայոց թագավոր Արտավազդ V-ի պատասխան նամակը Շապուհին, որը պահպանել է հռոմեական պատմիչ Տրեբելլիոս Պոլլիոնը։ «Արտավազդ, Հայոց թագավորը,— ասում է Տրեբելլիոսը, — ուղարկեց Շապուհին հետևյալ նամակը.—«Համակիր եմ քո փառքին, բայց երկյուղ եմ կրում, որ դու ոչ այնքան հաղթել ես, որքան հրահրել ես մոլեգին կռիվը։ Վալերիանոսին այժմ պահանջում են ազատ արձակել և՛ նրա որդին, և՛ թոռը, և՛ հռոմեական զորավարները, և՛ ամբողջ Գալլիան, ամբողջ Աֆրիկան, ամբողջ Սպանիան, ամբողջ Իտալիան ու նաև բոլոր ժողովուրդները, որոնք ապրում են Իլլիրիկումում, նաև Արևելքում ու Պոնտոսում[31] և որոնք կողմնակից են հռոմայեցիներին կամ նրանց հպատակ են։ Դու վերցրիր գերի միայն մի ծերունու, իսկ քո դեմ խիստ թշնամացրիր Երկրագնդի բոլոր ժողովուրդներին, գուցե նաև մեր դեմ, որ ուղարկել էինք քեզ օգնական զորքեր, մենք, որ քո հարևաններն ենք՝ միշտ ծանր դրության մեջ ենք ընկնում, երբ դուք իրար հետ կռվում եք»[32]։ Այսպես էր պատասխանում Հայաստանի պարսկական մասի Հայոց թագավորը, որի երկիրն անմիջապես սահմանակից էր պարսկա-հռոմեական պատերազմների մարտադաշտերին, իսկ վրացիները, աղվանները և քուշանները առհասարակ հրաժարվեցին Երանշահրի արքայի նամակները ստանալ և նույնիսկ խոստացան օգնելու հռոմայեցիներին։

Այս նամակի բնագիրը, անկախ նրանից թե այն գոյություն է ունեցել, թե պատմագիրն է Արտավազդին վերագրում, բոլոր դեպքերում հանդիսանում է իր ժամանակաշրջանի հետաքրքիր վաստաթուղթ։ Այս բնագրից տեղեկանում ենք, որ Մեծ Հայքի պարսկական մասը, որտեղ թագավորում էր Արտավազդ

---

[31] Illiricum, Oriens, Pontica — սրանք հռոմեական կայսրության Բալկանյան թերակղզու և ասիական դիոցեզներն են։

[32] Scriptores Historiae Augustae, vol. III. Trebelli Pollionis, Valeriani duo III, 1—3 (The Loeb Classical Library), London, 1954, էջ 4, 6։

III. Artavasdes rex Armeniorum talem ad Saporem epistulam misit: „In partem gloriae venio, sed vereor ne uon tam viceris quam bella severis. Valerianum et filius repetit et nepos et duces Romani ei omuis Gallia et omuis Africa et omnis Ilispania et omnis Italia et omnes gentes quae sunt in Illyrico atque in oriente et in Ponto, quae cum Romanis consentiunt aut Romanorum sunt, unum ergo senem cepisti sed omnes gentes orbis terrarum infestissimas tibi fecisti, fortassis et nobis, qui auxilia misimus, qui vicini sumus, qui semper vobis inter vos pugnantibus laboramus". Հայերեն թարգմ. Հակոբ Մանանդյան, նշվ. աշխ., էջ 93—94։

V-ը, ներքին կյանքում անկախ էր և կախվածությունը Սասանյան Իրանից արտահայտվում էր նրանով, որ պատերազմի ժամանակ Հայոց թագավորը օժանդակելու էր օգնական զորքերով։ Ուշագրավ է, որ ժամանակակիցները դիտակցում էին, թե բուֆեր պետության վիճակում գտնվող Հայաստանին որքան ծանր է նստում յուրաքանչյուր պատերազմական ընդհարում Սասանյան Իրանի և Հռոմեական կայսրության միջև։ Ի վերջո՝ մեջբերված նամակի տեքստը ցույց է տալիս, որ նույնիսկ, եթե սկզբնական շրջանում Արտավազդ V-ը համակրել է Սասանյաններին, այս շրջանում նա չի թաքցրել համակրանքը հռոմեական կայսրի հանդեպ և միայն հարկադրաբար է պաշտպանել պարսիկների շահերը։ Սա այն ժամանակն էր, երբ Սասանյան Իրանը գտնվում էր հկորության գագաթնակետին և Հայաստանում Արշակունիների հանդեպ նախկին հանդուրժողական քաղաքականությունը փոխվում է։ Արտավազդ V-ը իր վերոհիշյալ նամակից հետո համարվում է անվստահելի անձնավորություն. Նրան գահընկեց են անում և, ըստ երևույթին, սպանում, իսկ Հայաստանի պարսկական մասը դարձնում են Սասանյանների «դաստակերտ» (ժառանգական սեփականություն)։ Հայկական գահը հայտարարվում է Սասանյան դինաստիայի «երկրորդական գահ» և տրվում է Շապուհ I-ի որդուն՝ գահաժառանգ և պարսկական զորքերի գերագույն հրամանատար Որմիզդ-Արտաշիրին։

262 թ. փորագրված Նախշ-ի Ռուստեմի «Քաաբա-ի Զարդուշտ» Շապուհ I-ի եռալեզու արձանագրության (ŠKZ) մեջ Որմիզդ-Արտաշիրը հիշատակվում է իբրև «Արմենիայի մեծ թագավոր»։ Այսպես է վերջանում հայ Արշակունիների գահակալությունը Հայաստանի պարսկական մասում, իսկ հռոմեական մասում շարունակում էր թագավորել Տիրան-Տրդատը (Տրդատ II), մինչև 273 թ., երբ նրան հաջորդում է որդին՝ Խոսրով II-ը (273—287), Տրդատ III Մեծի հայրը։ Վերջինս 293 թ. զենքի ուժով վերականգնում է Մեծ Հայքի թագավորության ամբողջականությունը։

ПОЛИТИЧЕСКОЕ СОСТОЯНИЕ АРМЕНИИ В ПЕРИОД ЦАРСТВОВАНИЯ АРТАВАЗДА V (252/3—261)

С. Т. ЕРЕМЯН
Академик АН Арм. ССР

Резюме

Результатом «постыднейшего мира» 244 г. между Сасанидским Ираном и Римской империей был раздел царства Великой Армении на персидскую (4/5 часть) и римскую (1/5 часть) части. Армянский царь Тиридат II (216—252/3) восстал и не признал навязанные стране условия мирного договора 244 г. Этим воспользовались римляне, надеясь на военные успехи имперских войск. Из трехязычной надписи персидского царя Шапура I (243—272) на «Кааба-и Зардушт» в Накш-и Рустеме узнаем, что из-за Армении возобновились военные действия между двумя державами. Во время военной кампании, которую возглавлял сын Шапура I, наследник престола и главнокомандующий иранскими войсками Ормизд-Арташир, римляне в Сирии, Каппадокии и Месопотамии потерпели тяжелое поражение, и император Галл (251—253) в

252/3 г. вынужден был признать условия договора 244 г. После этого восставший армянский царь Тиридат II со своим двором перешел в римскую часть Армении, где процарствовал еще 20 лет (с 252/3—273 гг.). В персидской части Армении остались недовольные прорримской политикой Тиридата II аршакидские сепухи, из которых Артавазд V (с 252/3—261) был назначен Шапуром I царем этой части Армении. Были восстановлены условия Рандейского соглашения 63 г. н. э., в силу которого армянский престол являлся вторым (secundogenitur) после престола царя царей, но уже не парфянских Аршакидов, а Сасанидов. Эта часть Армении сделалась вассально-зависимым царством. Однако такое положение местной династии в Армении Сасаниды терпели до поры до времени.

Новыми военными успехами Сасанидов во время третьей кампании против римлян, когда был взят в плен император Валериан (в 260 г.), была предрешена судьба армянских Аршакидов в персидской части Армении. Артавазд V был лишен престола и, вероятно, убит. Поводом для этого послужило его письмо Шапуру I, в котором он не скрывал своих симпатий к римлянам и просил освободить из плена императора Валериана (текст письма сохранился у Требеллия Поллиона). В упомянутой трехязычной надписи «Кааба-и Зардушт», высеченной в 262 г., «великим царем Армении» фигурирует уже сын Шапура I, наследник престола Ормизд-Арташир. Персидская часть Армении была объявлена «дастакертом» (наследственной собственностью династии Сасанидов) и вторым престолом после престола «шаханшаха Ирана и не-Ирана». Этим подчеркивалось важное значение Армении как военного плацдарма в борьбе Сасанидского Ирана против Римской империи на месопотамской границе.

В римской части Армении продолжал царствовать Тиридат II, Агафангел называет эту часть «дастакертом римлян», она являлась вассально-зависимым царством, находящимся под «покровительством» римского императора. В 293 г. с помощью римлян армянские Аршакиды изгнали Сасанидов из восточной части страны и восстановили политическое и территориальное единство царства Великой Армении.